«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Էպոսի դերը հայրենասիրության և արժեհամակարգի ձևավորման գործում
ՀԵՂԻՆԱԿ	դասվար ՎիոլետաՀախոյան
ՄԱՐԶ	Լոռու մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Բլագոդարնոյեի հիմնական դպրոց
ՂԵԿԱՎԱՐ	մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր Ա.Ծատուրյան

Ստեփանավան 2022

Բովանդակություն

Ներածություն..... 3
1. Էպոսիժանրայինառանձնահատկությունները. Հայկականժողովրդականէպոսը.... 4
2.Էպոսի հայրենասիրական և արժեքային գաղափարները..... 6
3. «Սասնածռեր» էպոսիդասավանդմանփորձ 12
Եզրակացություն 16
Օգտագործվածգրականությանցանկ 19

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Ազգային էպոսը էպիկական բովանդակությամբ էպիկական ժանրի բանաստեղծության կամ գրականության գործ է, որը ավանդաբար ներկայացնում կամ արտացոլում է որևէ ազգի մշակութային կամ ինքնաճանաչողական ոգին, դա կարող է վերաբերել նաև ինքնուրույնության կամ անկախության ձգտող որևէ էթնիկական կամ լեզվաբանական խմբի: Ազգային էպոսների մեջ հաճախ նկարագրվում է տվյալ ազգային էթնոսի ծագման և զարգացման պատմությունը. կամ պատմության մի մասը, կամ տվյալ ազգության ինքնորոշման կամ ինքնագիտակցման պատմության կարևորագույն դրվագները և այլ ազգային խորհրդանշանների ծագման կամ ընդունման պատմությունը:

Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է հայ բանահյուսության գոհարի՝ «Սասնա ծռեր» էպոսի տարբեր սերունդների կողմից հայրենասիրական և արժեհամակարգային ընկալմամբ:

Թեմայի նպատակը և խնդիրները: Սույն աշխատանքի նպատակն է հայրենասիրության և արժեհամակարգի ձևավորման համատեքստում վերլուծել հայկական էպոսի առանձնահատկությունները:

Ուսումնասիրության խնդիրներն են՝

1. ներկայացնել էպոսի ժանրային առանձնահատկությունները
2. բացահայտել «Սասնա ծռեր» էպոսի հայրենասիրական և արժեքային գաղափարները
3. բացահայտել «Սասնա ծռեր» էպոսում դրական և բացասական բնավորության գծերը, վարքաձևերը, արժեքային դիրքորոշումներն ու մոտեցումները:

1. Էպոսիժանրայինառանձնահատկությունները. Հայկականժողովրդականէպոսը

«Էպոս» բառը գործածվում է երկու իմաստով. լայն առումով նշանակում է գրական երեք սեռերից մեկը (էպիկական, քնարական, դրամատիկական), նեղ ժանրային առումով՝ ժողովրդական հերոսական կամ ավանդական վեպ, վիպական բանահյուսության ծավալուն և բարդ տեսակ, որը բաղադրվում է վիպական ու պատմահերոսական երկերից, ավանդություններից, զրույցներից:

Էպոսը պատմում է ոչ միայն ժողովրդի հերոսական անցյալի մասին, այլև նրա պատմության գեղարվեստական արտացոլումն է: Էպոսի հիմքում սովորաբար դրված են լինում պատմական կարևորագույն իրադարձություններ, ժողովրդի հերոսական պայքարն իր ազատության համար: Սակայն էպոսի պատմական հատկանիշներից մեկն այն է, որ նրա մեջ անբաժանելի են պատմությունն ու երևակայությունը: Հենց երևակայությունն էլ, արտացոլելով ժողովրդի պատմական գիտակցության որոշակի աստիճանը, նույնպես ինչ-որ չափով պատմական է: Ժողովրդի կյանքն էպոսում արտացոլված է իր ամբողջ լայնությամբ ու բազմազանությամբ: Ահա թե ինչու ծանոթանալով որևէ ժողովրդի էպոսին՝ մենք քաղում ենք բազմաթիվ տեղեկություններ նրա հոգեբանության, բարքերի, կենցաղի, սովորույթների մասին, այն բնության մասին, որը շրջապատում է էպոսի հերոսներին և օգնում՝ հասկանալու նրանց, ժողովրդի բանաստեղծական, հոգևոր մշակույթի, նրա պատկերավոր մտածողության, գեղագիտական աշխարհընկալման մասին և այլն:

«Սասնածռերը» վերջնականապեսձևավորվելէ VIII–X դարերումտեղիունեցածպատմականմեծիրադարձություններիընթացքում՝որպեսարա բզավթիչներիդեմհայությանմղածտևականպայքարիարդյունքումնվաճածանկախությ ան գեղարվեստականարտահայտություն: «Դիցաբանականհերոսիև, ընդհանրապես, դիցաբանությանպատմականացմանընթացքըակնհայտէ: Բայցդաերևույթիմիկողմնէմիայն: Նրաանսովորբարդությանտեսակետիցշատկարևորէնկատել, որնաոչթեմեկ, այլմիամբողջշարքդարաշրջաններրիարդյունքէ»[1],- գրում է Գ. Գրիգորյանը:

[1]**Գ. Գրիգորյան,** Էպոսի ժանրային հատկանիշները, Երևան, 1985, էջ 27:

Վիպերգիհիմքումընկածենբազմաթիվապստամբություններ, որոնքհայերըմղելենարաբականխալիֆաթինվաճողականքաղաքականությանդեմ: Սակայնմիայնդրանովչիսպառվումմերէպոսիբովանդակությունը. այնչիսահմանափակվումմիայնպատմականդեպքերիպատկերմամբ: «Սասնածռերի» նյութըկուտակվելէդարերով[2]:

Ավելիքանհազարտարի«Սասնածռերի» ստեղծմանըմասնակցելենժողովրդականվիպասացներիբազումսերունդներ: Նրանցստեղծագործականներևակայությամբ«Սասնածռերը»շարունակհղկվել, հարստացելէնորանորմիջադեպե-
րովևբազմաթիվպատումներովհասելնորժամանակներին: Լինելովհայությանտարբերսերունդներիստեղծագործականձիրքիևդարավորկենսապ որձիարդյունքը՝«Սասնածռերն» արտացոլումէժողովրդիհավաքականմտածողությունը, կենսասիրությունննուբարոյականըմբռնումները, ազատասիրականոգին: Էպոսումհետևողականորենընդգծվումևպաշտպանվումէհերոսականպայքարովուհաղ թանակովսեփականներկրիանկախությունըպահպանելու գաղափարը:

«Սասնածռեր» կամ«ՍասունցիԴավիթ» հայժողովրդականհերոսավեպըվիպասացներիևբանահավաքներիկողմիցկոչվելէնաև «Սասնափահլևաններ», «Սասնատուն», «Ջոջանցտուն», «ՍասունցիԴավիթկամՄհերիդուռ», «ԴավիթևՄեր», «Դավթիպատմություն», «Դավթիհեքիաթ» և այլն:

«Սասնա ծռերը» հայտնաբերել և ամբողջությամբ գրառել է Գարեգին Սրվանձտյանը 1873 թվականին Մշո Առնիստ գյուղում երեսփոխան Կրպոյից և հրատարակել Կ. Պոլսում («Գրոց ու բրոց» և «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», 1874 թ.): Երկրորդ տարբերակը 1886 թվականին Էջմիածնում գրի է առել Մանուկ Աբեղյանը՝ Նախո քեռի Մոկացուց և հրատարակել Շուշիում («Դավիթ և Մեր», 1889 թ.): Նորանոր տարբերակներ են գրառել Գ. Հովսեփյանը, Խ. Դաղյանը, Ս. Հայկունին, Ա. Աբեղյանը, Ե. Լալայանը, Կ. Մելիք–Օհանջանյանը, Ա. Ղանալանյանը և ուրիշներ:

---

[2]**Ա. Դոլուխանյան,** Հայգրականությանպատմություն, Երևան, 2006, էջ 54:

2.Էպոսիհայրենասիրական և արժեքային գաղափարները

Էպոսագետները բազմիցս անդրադարձել են <<Սասունցի Դավիթ>> էպոսում եղած գաղափարախոսությանը: Էպոսի առաջին և գերագույն պատգամը հայրենասիրությունն է, անհաշտ պայքարը հայրենիքը նվաճել ցանկացող նվաճողների դեմ:

Հայրենասիրության առաջին օրինակը տալիս է Ծովինարը՝ Սասնա դյուցազունների նախամայրը: Նա իր անձը զոհում է հանուն հայրենիքի, գնում է ամուսնանալու այլադավան խալիֆի հետ, միայն զոհեր չլինեն:

Ծովինարի անձնվիրությունն առկա է չորս չյուղերի գլխավոր հերոսների՝ Սանասարի, Մեծ Մհերի , Դավթի, Փոքր Մհերի մոտ: Հայրենասիրական առումով ամենից հետաքրքիրը Դավթի ճյուղն է: Դավիթը նախ պայքարում է արաբ հարկահանների դեմ, ապա սուրը ձեռքին ազատագրում է հայրենի հողը:

Էպոսում առկա է նաև հայ ժողովրդի պայքարը երկրի ներքին անարդարությունների դեմ: Էպոսում հանդես եկող դևերը, վիշապները, առյուծը խորհրդանիշներ են: Նրանց դեմ ևս պայքարում են Սասնա դյուցազունները: Մեծ Մհերը սպանում է Սասուն եկող հացի ճանապարհը փակող Առյուծին և սասունցիներին փրկում սովից: Դավիթը դևերից խլում է նրանց հարստությունը, բաժանում հողի աշխատավորներին:

Հայ ազգային էպոսում շարունակ փառաբանվում են աշխատանքն ու աշխատավոր մարդը: Սանասարն ու Բաղդասարը նախքան իրենց բերդը կառուցելը տներ են կառուցում հասարակ մարդկանց համար:

Սանասարն ու Բաղդասարը իրենց բերդի անվանադրումը վստահում են մի պապիկի, որը տեսնելով բերդի հսկա քարերը՝ բերդը կոչում են Սասուն:

Էպոսում հաճախ ենք տեսնում բերդաշինություն, կամրջաշինություն, վանքաշինություն: Դավիթը գյուղացիների փոխարեն վարում է նրանց հողը:

Էպոսում օրհներգվում է տարբեր ժողովուրդների բարեկամությունը; Նրանում առկա է պատմական այն ճշմարտությունը, որ հայերը միշտ հանդուրժող են եղել

օտար դավանանք ունեցողների նկատմամբ: Ժողովուրդների բարեկամության խորհրդանիշը արաբ ծերունին է, որի խորհրդով Դավիթը դադարեցնում է կոտորածը և զենքն ուղղում նվաճող Մսրա Մելիքի դեմ:

<<Սասունցի Դավիթ>> էպոսը յուրօրինակ զգուշացում ունի հայ ժողովրդին. Երբեք ձեռքից չի կարելի իջեցնել ինքնապաշտպանական սուրը, միայն այդ կերպ կարելի է ապահովել հայրենիքի խաղաղությունն ու բարգավաճումը: Այս ճշմարտությունը ներկայացված է Դավթի խորհրդանիշային երազում: Դավիթը վերաշինում է հոր Մարութա վանքը, սակայն ամեն առավոտ վարպետները տեսնում էին վանքի պատերը քանդված: Այս անհասկանալի երևույթն իր լուծումն է ստանում, երբ երազում Աստծու հրեշտակը Դավթին ասում է, որ վանքի հիմքում պետք է դրվի Դավթի սուրը: Դրանից հետո վանքը մնում է կանգուն:

Էպոսի կերպարները:<<Սասունցի Դավիթ>> էպոսը հարուստ է հերոսներով: Նրանում տեսնում ենք Սասնա դյուցազունների տարբեր սերունդներ, թշնամիների կերպարներ, հայրենասեր կանանց, օտարազգի կանանց:

Սասնա դյուցազունները՝ Սանասարը, Մեծ Մհերը, Դավիթը, Փոքր Մհերը գերմարդիկ են: Նրանք մեն մենակ ի վիճակի են կատարել բյուր մարդկանց գործեր, վախ չունեն, անձնվեր են, հայրենիքի նվիրյալներ են: Նրանք ունեն մարդկային զգայուն գծեր, կարող են սխալվել, ժամանակավոր խաբվել, բայց միշտ պատրաստ են ուղղել իրենց սխալը, եթե անգամ դա իրենց կյանքի գնով է:

Էպոսում մեծ հայրենասերներ են Սասնա դյուցազունների կանայք՝ Քառասուն ճյուղ Դեղձուն ծամը, Արմաղանը, Խանդութը, Գոհարը: Դեղձուն ծամը երկար տարիներ դուրս չի գալիս իր սենյակից և պահում է ամուսնու սուգը: Արմաղանը հանուն հայրենիքի մեռնում է նույն օրը, երբ ծնվում է Սասունի ապագան ապահովող իր որդին՝ Դավիթը: Խանդութը Դավթի մահից հետո ինքնասպան է լինում, իսկ Գոհար խաթունը մահվանից առաջ խնդրում է ամուսնուն.

Քենե կը խնդրեմ՝
Ինչ ժամանակ դու գաս, ինձի տեսնես,
Ինձի տանես Սասուն,
Խանդութ խանումի կուշտ թաղես:

Սասնա դյուցազունների կանանց կերպարներում ժողովուրդը դրել է հայ կնոջ իդեալական գծերը՝անսահման նվիրվածություն ամուսնուն, իր ընտանիքին, հայրենիքին:

Էպոսում տեսնում ենք նաև օտարազգի կանանց: Իսմիլ խաթունը բարդ կերպար է: Նա խելացի է, շրջահայաց, զգուշավոր, նաև խիստ հաշվենկատ: Նա յոթ տարվա գինով հարբեցնում է Մեծ Միերին ու նրանից զավակ ունենում, սակայն Միերի ու Արմաղանի մահվանից հետո խնամում և մեխացնում է մանուկ Դավթին, կանխում Դավթին սպանելու որդու փորձերը: Դրա համար էլ էպոսում ասվում է.

Դառնանք զօղորմին փի փանք

Իսմիլ Խաթունին

Քառսուն օղորմին:

Սակայն ժողովուրդը օղորմի չի տալիս Չմշկիկ Սուլթանին, որի նենգության պատճառով Դավիթը սպանվում է: Հայկական էպոսը մերժում է նաև Ձենով Հովհանի կնոջը՝ Սարիեին, որը փորձում է գայթակղել Դավթին, և երբ վերջինս ողջախոհ է գտնվում, վրեժխնդիր է լինում: Էպոսում Սարիեն հենց ինքը խոստովանում է, որ ինքը հայ չէ, օտարազգի է:

Էպոսի կանանց մեջ ամենաուշագրավը Խանդութն է, որը կնոջ կատարելատիպ է: Խանդութը կրթված կին է: Նրա գեղեցկությունը պատկերված է գուսանների գովքում: Ըստ այդ երգի՝ Խանդութը նուրբ է ինչպես եղեգը, լայնասիրտ է ու զգայուն, գեղեցկախոս է, ատամները մարգարտաշար են, համաչափ է մարմնով, ունի հարբեցնող աչքեր և փարթամ մազեր: Խանդութն իր անձի առավելությունները գիտակցելով է ընտրում Դավթին՝ մերժելով քառասուն փահլևաններին: Էպեսում Խանդութի նետած խնձորը Դավթին ներկայացնում է նրա սերը: Դավթի և Խանդութի սիրո պատմությունը էպոսի քնարական էջերից է: Դավթի մահից հետո Խանդութն ավելորդ է համարում իր ապրելը և բերդից իրեն ցած է նետում: Այնտեղ, ուր զարկվում է Խանդութի գլուխը, քարի մեջ փոս է առաջանում, և նրանում որպես սանդ հատիկ են ծեծում, իսկ կրծքի ընկած տեղում բխում են երկու աղբյուրներ:

<<Սասնա ծռեր>> էպոսի գլխավոր հերոսը Դավիթն է: Էպոսը մեր օրերն է հասել տարբեր խորագրերով՝ <<Ջոջանց տուն>>, <<Քաջանց տուն>>, <<Սասնա ծռեր>>, <<Սասունցի Դավիթ>>: Դավթի կյանքն էպոսում պատկերված է ծննդյան

օրից մինչև մահ: Ծնված օրից նա որբ է և ուղարկվում է Մըսր, սակայն սնվում է Սասունից բերված յուղով և մեղրով: Դավիթը մեծանում է շատ արագ և հսկայական ուժից սարսափում է Մսրա Մելիքը, որը մանուկ Դավթին փորձելու համար նրա մի կողքին դնում է կրակ, մյուսին՝ ոսկի: Դավիթը ձեռքը տանում է դեպի կրակը: Մելիքը փորձում է Դավթի հնազանդությունը և նրան ուզում է անցկացնել իր թրի տակով, սակայն Դավիթը չի անցնում, և ձեռքը կպչում է պինդ քարի, ու քարից կրակ է ելնում: Մսրում Դավթի հսկայական ուժը և մանկական միամտությունը նրան դնում են երբեմն ուրիշների համար վտանգավոր, երբեմն նաև զավեշտական իրավիճակների մեջ: Արդեն Մսրում Մելիքը հասկանում է, որ Դավիթը իր թշնամին է և Սասուն ճանապարհելիս իր ծառաների միջոցով փորձում է սպանել նրան: Սակայն պատանի Դավիթը նաև շրջահայաց է, նա կռահում է սպասվող վտանգը և ուղեկցող ծառաներին կախելով Բաթմանա կամրջի երկու կողմերից՝ իմանում է դավադրության մասին: Ձենով Հովհանի փորձերը՝ Դավթին գառնարած կամ նախրորդ դարձնել, ձախողվում են, և Դավիթը աննպատակ վատնում է իր ուժը: Դավթի ուժը նպատակաուղղում է արտատեր պառավը, որը նրան հայտնում է արաբ հարկահանների և նրա հոր՝ Միերի ձիու՝ Քուռկիկ Ջալալու, Թուր Կեծակիի և Խաչ պատերազմիի մասին: Ժողովրդական հերոսին հատուկ ցասումով Դավիթը պատուհասում է արաբ հարկահաններին ու ձեռնունայն հետ ուղարկում Մըսր:

Դավիթը մեծահոգի է և ազնիվ: Նա քանդում է Որսասարի պարիսպներն ու գազաններին ազատ արձակում:

Չէ՞ որ էնոնք գերի են, հրողբեր,

Մարդ էլ գերի զարկի՞:

Մելիքի դեմ կռվի գնալիս Դավիթն ազնվորեն զգուշացնում է իր գալու մասին.

Գնաց, էլավ Լեռա սարի գլուխ, կանչեց. - <<Էհե~յ,

Ով քընած է՝ արթուն կացեք,

Ով արթուն է՝ ձիե'ր թամբեք,

Ով թամբեր է՝ զենքե'ր կապեք,

Ով կապեր է՝ էլե'ք, հեծե'ք,

Չ'ասեք Դավիթ գող-գող էկավ,

Գող-գող գընաց>>:

Դավիթը զգայուն է, նա կռվի գնալիս մի պահ վախի զգացում է ունենում՝ կապված մահվան հետ և հրաժեշտ է տալիս Սասունի կանանց, աղջիկներին, որոնք իր համար մայրեր և քույրեր են եղել, հրաժեշտ է տալիս Ծովասարի պաղ աղբյուրներին և պաղ քամիներին:

Դավիթը մեծահոգաբար առաջին զարկերը բաշխում է Մսրա Մելիքի մորն ու քրոջը, որոնք մանուկ ժամանակ իրեն խնամել են:

Հայկական էպոսի գլխավոր հերոսն ազատ է արձակում Մսրա զորքին՝ պատվիրելով այլևս կռվով չգալ Սասունի վրա: Դավթի կերպարին առանձին հմայք է տալիս Խանդութի նկատմամբ ունեցած նրա սերը: Դավիթը վիպական վսեմության հետ շատ կենդանի ու իրական կերպար է:

Դավթի հակապատկերն է Մսրա Մելիքը: Մելիքն ի հակադրություն Դավթի ազատության, շարունակ դիմում է նենգ միջոցների: Դավթին հյուրասիրելու պատրվակով գցում է փոսի մեջ, վախից իրեն փաթաթում քառասուն գոմշի կաշվով և վրան գցում քառասուն ջաղացքար: Մելիքն արյունարբու է, նա իր արյամբ է գրում զորահավաքի հրաման, նա նվաճող է և իր ձեռքն է վերցրել աշխարհի երեք կողմերը: Որքան Սասունի ժողովուրդը սիրում է Դավթին և կապված է նրա հետ, այնքան արաբ հասարակ մարդիկ ատում են Մելիքին, որն իրենց զոռով է բերել կռվի: Մելիքի կերպարի միջոցով հայ ժողովուրդը մերժում է բոլոր բռնակալներին ընդհանրապես:

<<Սասունցի Դավիթ>> էպոսի արվեստը: <<Սասունցի Դավիթ>> էպոսը բարձարվեստ ստեղծագործություն է: Այն ստեղծվել է բարբառով, սակայն համահավաք բնագիրը հասկանալի է գրական հայերենին տիրապետողներին, և նրանք կարող են վայելել էպոսի ողջ հմայքը: Էպոսում շատ մեծ տեղ են գրավում չափազանցությունները: Այն առկա է ողջ էպոսի մեջ: Էպոսում առկա են սիրո և կարոտի երգեր, հեքիաթներ, առած-ասացվածքներ (ռեֆրեն):

Չափազանցությունները երբեմն ներկայացվում են հակադրության միջոցով: Բանակի մեծությունը պատկերվում է հետևյալ հիպերբոլայով.

Տեսան՝ անտառի ծառներին թիվ կա,

Էն յոթ թագավորի զորքին թիվ չկա:

Էպոսում հանդիպում ենք հայ ժողովրդական առած-ասացվածքների՝ <<Առյուծն առյուծ ա, էղնի էգ, թե որձ>>, <<Աշխարհը գութանի մոտ կլիանա>>, <<Վիր տուն որ հաց կ'ուտին, էնոր տաշտ ու մաղ կը կախեին>>, <<Տղամարդ որ կա՝ գլուխ է, կնին որ կա՝ ոտ է>> և այլն:

Էպոսում բազում են խորհրդանիշները. օրինակ, Սասնա դյուցազունների քրիստոնյա լինելը հաստատվում է նրանց թևի վրա եղած մսե խաչով: Էպոսում տեսնում ենք օրհնանքների, անեծքների դրսևորումներ, որոնք ունեն կիրառական իմաստ: Միերն, օրինակ, անմահ ու անժառանգ է մնում իր հոր՝ Դավթի անեծքի հետևանքով:

Էպոսում կան երգիծական հատվածներ, դրանցում առկա է և՛ հումորը, և՛ սպանիչ սարկազմը: Հումորով ժողովուրդը ծաղրում է իր սիրելի հերոսներին՝ Դավթին, Հովհանին, իսկ սպանիչ ծաղրի է ենթարկում Մսրա Մելիքին, Կոզբադնին, արաբ հարկահաններին, Վերգոյին:

Էպոսում կան թվեր, որոնք կրկնվում են՝ հազար-հազար, քառասուն-քառասուն և այլն:

Ժողովրդական ասացողները բարձր արվեստով են կերտել էպոսում գործող անձանց կերպարները՝ թե գլխավոր և թե դրվագային: Սասնա բոլոր դյուցազունները նման են իրենց հայրենասիրությամբ և ազնվությամբ, սակայն նրանք միագիծ կերպարներ չեն, այլ անհատականություններ: Երբեք չի կարելի շփոթել Մեծ և Փոքր Միերներին, Սանասարին ու Դավթին: Նույնը կարելի է ասել նաև կանանց մասին:

Առանձին մեկնաբանման է արժանի էպոսի <<Վերջերգը>>: Նրանում պատկերված է քարում բանտարկված Միերը, որը հիշեցնում է հեթանոս ժամանակների այն Արտավազդին, ում հետ հայերն արդարության հաղթանակի հույսեր էին կապում: Միերի քարը բացվում է տարին երկու անգամ՝ Վարդավառի և Համբարձման քրիստոնեական տոների ժամանակ: <<Վերջերգում>> հայ ժողովուրդը փայփայում է արդար ու բարի աշխարհ ունենալու իր դարավոր երազանքը, բարեկեցիկ կյանքի տենչը:

3. «Սասնածռեր» էպոսի դասավանդման փորձ

Թեման – «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» էպոսը

Դասի տիպը – Ամրապնդման դաս՝ ԽԻԿ համակարգով

Տևողությունը– 1 դասաժամ

Դասի նպատակները

- Պատկերացում տալ էպոսի ժանրային առանձնահատկության մասին:
- Ընդգծել հայկական ժողովրդական էպոսի նշանակությունը:
- Ընդհանուր պատկերացում տալ էպոսի պատմական և առասպելական շերտերի մասին:
- Դիտարկել էպոսի ճյուղերի բովանդակությունն ու գաղափարները:

Դասի խնդիրները

- Նկարագրել հայկական ժողովրդական էպոսը՝ ժանրային ու բովանդակային առանձնահատկություններով:
- Բնութագրել էպոսի հերոսներին:
- Էպոսից առանձնացնել պատմական ու առասպելական դրվագները:
- Առանձին ներկայացնել էպոսի ճյուղերը:

Մեթոդները

Կոլեկտիվ - համագործակցային, ինչպեսնաևուսուցմանակտիվկամփոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդներիևհնարների (մտագրոհ, մտքիքարտեզ, պրոբլեմայինհարց, շարադրությունևայլն) կիրառում:

Էպոսիուսումնասիրմանդասիմեթոդականշղթանընդգրկումէհետևյալքայլերը.

- նախապատրաստականզրույցէպոսի մասին,
- էպոսի առանձին ճյուղերի բովանդակության քննարկում,
- էպոսի յուրաքանչյուր ճյուղի կերպարների բնորոշում,
- աշխատանքէպոսիերևակայականկողմի, լեզվիևոճիառանձնահատկությունների, հիմնականմտքի, դաստիարակչական գաղափարիբացահայտման, ենթատեքստիկռահմանուղղությամբ,
- էպոսի հիմնական գաղափարի բացահայտում:

ԴԱՍԻԸՆԹԱՑՔԸ

Կազմակերպմանփուլ (2 – 3 րոպե)

Դասիկառավարում, անհրաժեշտպարագաներիպատրաստում, նախապատրաստականզրույց, կազմակերպչականմաս:

ԴասընսկսումենքԽԻԿհամակարգով:

1. Խթանմանփուլ (4 – 6 րոպե)

ա. Նշումենքօրվադասիթեմանևնպատակը: Անցկացնումենք գիտելիքներիամփոփում[a] հարցուպատասխանիմիջոցով: Հաջորդխնդիրը, որպետքէկարևորվիէպոսիուսուցմանժամանակ, նրաժանրայինառանձնահատկություններիշուրջտարվողաշխատանքնէ: Հեքիաթի ու էպոսիժանրայինառանձնահատկություններըհամեմատելով՝ կարելիէնրանցմիջևընդհանրություններուտարբերություններ գտնել, երեխաներիուշադրությունըհրավիրելիեքիաթիկառուցվածքայինառանձնահատկությունների, մասնավորապեսհեքիաթիսկզբի, վերջիվրա: Խոսվում էնշված ժանրերի մասին, ընդգծվում , որ դրանք բանահյուսական ժանրեր են:Խոսելովտվյալժանրերիկառուցվածքիմասին՝ պետքէաշակերտներինբացատրելայնհանգամանքը, որհեքիաթում և էպոսում միխումբկերպարներ գործումենինչ-որարարքներ՝ իրենցնպատակներնիրականացնելումղումով: Այդկերպարներնիրարօգնումենկամխանգարում: Այդպիսովերեխանըմբռնումէբարուևչարի գործոնըոչմիայնհեքիաթում, այլև էպոսում, ինչպես նաև կյանքում, առօրյայում: Ստեղծագործության վերջումբարուհաղթանակըկոգևորինրան՝ կատարելուբարի գործերևհասկանալու, որհաղթանակիբերկրանքըհեշտությամբչիտրվում: Այսինքն՝ հեքիաթը և էպոսը պետքէմեկնաբանվեն, իմաստավորվենիրենցիսկկյանքիօրինակով:

1. Իմաստի ընկալման փուլ (25 րոպե)

Մտագրոհ մեթոդի միջոցով սկսում ենք նյութի հաղորդումը: Աշակերտներին ներկայացվում են էպոսի չորս ճյուղերը՝ բովանդակության ամբողջական ընկալման նպատակով: Այդ նպատակով կատարվում է.

- էպոսի երևակայական կողմի բացահայտում,
- էպոսի բարոյախոսական իմաստի վեր հանում,

- էպոսի լեզվի վերլուծություն:

Էպոսի ուսումնասիրությունը իրականացվում է, ինչպես պատմվածքինը, այսինքն՝ որպես գեղարվեստական ստեղծագործություն: Սա նշանակում է՝ անհրաժեշտության դեպքում դասը պիտի իրականացվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրամասերի կիրառմամբ:

Մտքերի քարտեզագրում» մեթոդի օգնությամբ էպոսից առանձնացվում են առասպելական հիմք ունեցող դրվագներ:

1. Երկվորյակ եղբայրների արտասովոր ջրային ծնունդը:
2. Սանասարի որդի Մեծ Միերի՝ մարտից առաջ լողանալը հայրենի Կաթնաղբյուրի ջրով, նույնը կատարում է նրա որդի Դավիթը:
3. Սանասարի կռիվը ծովային վիշապի դեմ:
4. ՍանասարուԲաղդասարեղբայրների՝անձրևիկամջրիհամարկռվելըվիշապն երիդեմ:
5. Քառասուն -Ճյուղ-Ծամիազատագրման դրվագը:
6. Քուռկիկ Ջալալին առնչվող տեսարանները. նա հրեղեն է, ջրային ծնունդ է, ինչպես Սասնա հերոսները:
7. Կանաչ քաղաքի վիշապի սպանության դրվագը:
8. Փոքր Միերի՝ Ագռաքարում փակվելու դրվագը:



Խմբայինաշխատանք

Թեմայիամրապնդմանհամարդասարանըբաժանել 4 խմբիևյուրաքանչյուրխմբինհանձնարարվումէնկարագրել«Սասանա ծռեր» էպոսը:

Առաջադրանքըկատարելուցհետոխմբերըլրացնումենհարցմանհետազոտակա նաղյուսակը:

«Սասնա ծռեր» էպոսը	
1. Նկարագրել Սանասարի կերպարը:	
2. Նկարագրել Մեծ Միհրի կերպարը:	
3. Նկարագրել Սասունցի Դավթի	

կերպարը:	
4. Նկարագրել Փոքր Միհերի կերպարը:	
5. Ի՞նչ է սովորեցնում էպոսը:	

Աշակերտները էպոսից պետք է առանձնացվեն նաև համապատասխան հատվածներ, որոնք բնութագրում են այս կամ այն կերպարին: Այսպիսի վերլուծության արդյունքը պետք է դառնա հեղինակի դիրքորոշման ըմբռնումն ու ընթերցողի վերաբերմունքի ձևավորումը ընթերցածի բովանդակության նկատմամբ: Հիմք ընդունելով բովանդակային բաղադրիչները՝ անհրաժեշտ է նախ երեխաների ուշադրությունը հրավիրել որոշակի բառերի ու արտահայտությունների վրա, քանի որ բառերի միջոցով է առաջին հերթին հնարավոր որոշել հերոսի հոգեվիճակը, նրա արարքների դրդապատճառները, հերոսի ինչպիսին լինելը, հեղինակի վերաբերմունքը նրա նկատմամբ և այլն:

Աշխատանքի ավարտից հետո խմբի անդամներից յուրաքանչյուրը պետք է ներկայացնի իր աշխատանքը: Յուրաքանչյուր խմբին լսելուց հետո պետք է ամփոփել խմբային աշխատանքը՝ սահուն անցում կատարելով դասի հաջորդ քայլին:

Կշռադատմանփուլ - 4 – 6 րոպե

Խմբայինտարբերաշխատանքներիցհետոաշակերտներըարտահայտումենսեփականմտքերը հայկական ժողովրդական էպոսի վերաբերյալ:

Գնահատումևանդրադարձ (2 -3 րոպե):

Հարցերիմիջոցովուսուցիչըպետքէպարզիդասիթերություններնուառավելությունները: Գնահատումըպետքէկատարելըստխմբայինևանհատականցուցանիշների:

Ամբողջդասիընթացքումհամեմատություններենանցկացվումէպոսի և տարբերհեքիաթներիմիջև, ևամբողջացվումենէպոսիվերաբերյալաշակերտների գիտելիքները:

Եզրակացություն

Թեմայի հետազոտությունը բերում է հետևյալ եզրակացություններին:

1. Էպոսն հայ հին բանահյուսության ժանրերից է: Այն սերում է հնագույն առասպելներից, ավանդական վիպական սյուժեներից, պատմական խավարումներով երգ-զրույցներից՝ վիպական մեկ ամբողջական համակարգի մեջ համաձուլված: Էպոսի առասպելաբանական հիմքի դրսևորում են նմանություններ՝ ջրային ծնունդների, հրաշապատում տարրերի առկայության հետ:
2. «Սասնա ծռեր» էպոսի չորս ճյուղերում առկա է հրաշապատում հեքիաթի տարրը:
3. Սանասարի և եղբոր ճյուղը ձևավորվել է երկվորյակ սրբազան նախնիների և ամպրոպային վաղընջական առասպելների հիքմի վրա (հերոսների ջրային ծնունդը, աստանդական կյանք, երկրի ու տոհմի հիմադրում, ջրարգել վիշապների դեմ կռիվ, ջրերի և աղջիկների ազատագրում, ամուսնություն): Մեծ և Փոքր Միհրի ճյուղերի հիմքում ընկած են հին հայկական և հնդիրանական երկնային լույսի և արեգակի Աստված Միհրի առասպելաբանական մոտիվները, զուգորդված ճայռում փակված հերոս-ների տեղական հնագույն առասպելի (Մեծ Միհրի՝ առյուծ սպանելը և սասունցիներին սովից փրկելը, Փոքր Միհրի անհաշտ պայքարը աշխարհի անարդարությունների դեմ, ժայռում փակվելը, արդարության և փրկության ակընկալիքները՝ կապված նրա ՝ ժայռից դուրս գալու հետ): Դավթի ճյուղի նախահիմքում ընկած է ամպրոպային կռվի հին հնդեվրոպական առասպելը (Դավիթն ու Մսրա Մելիքը նույն դյուցազուն հորից սերված խորթ եղբայրներ են, ի ծնե հակոտնյաներ, անձնավորում են հակադիր սկզբունքներ. Դավիթը գեղեցիկ արտաքինով, հրեղեն ձիով, կայծակե թրով սպանում է ջրաղաց քարերի տակ խոր հորհում թաքնված Մսրա Մելիքին, ազատում, երկիրն ու մարդկանց նրա սպառնալիքից, տոնում իր հաղթանակը, ամուսանանում):
4. Էպոսը սնում է մեր մտածողությունը ժողովրդի հոգեբանության մասին հարուստ նյութով: Բացի դրանից՝ մեծ է հեքիաթի և էպոսի դաստիարակչական նշանակությունը: Այդ ստեղծագործությունները

ներկայացնում են բարոյական արժեքներ ու սկզբունքներ, որոնք ներկայացվում են ոչ թե որպես խրատ ու քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքներով, խոսքերով: Հենց այդ հանգամանքն էլ ուժեղացնում է ընթերցողի զգացմունքների ու համոզմունքների վրա թողնվող ազդեցությունը:

Օգտագործվածգրականությանցանկ

1. ԱբեղյանՄ., ՄատենագրությունՍասունցիԴավիթՀայժողովրդականվեպում, Երևան, 1939:
2. ԱբեղյանՄ., Հայժողովրդականվէպը, Թիֆլիս, 1908:
3. ԳրիգոյանԱ., Հայժողովրդականբանահյուսություն, Երևան, 1980:
4. ԴոլուխանյանԱ., Հայժողովրդականբանահյուսություն, Երևան 2008:
5. ԴոլուխանյանԱ., ՖրեդերիկՖեյդինև «ՍասունցիԴավիթ» չափածոէպոսը, Երևան, 2008:
6. Դոլուխանյան Ա., Հայգրականությանպատմություն, Երևան, 2006:
7. ԵղիազարյանԱ., «Սասնածոերի» պոետիկան, Երևան, 1999: